

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ Երվանդ Զախարյանի ուղերձը համակարգի ստեղծման և Հողաշինարարի և գեոդեզիստի օրվա կապակցությամբ

ՀԱՐԳԵԼԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐ

Ձերմոտեն շնորհավորում եմ Ձեզ կադաստրի համակարգի ստեղծման և Հողաշինարարի և գեոդեզիստի օրվա կապակցությամբ:

Անցնող ժամանակահատվածում, հիրավի, կադաստրի համակարգում բազմաթիվ քայլեր են ձեռնարկվել գեոդեզիայի և քարտեզագրության, հողաշինարարության, կադաստրի վարման աշխատանքների բարելավման ուղղությամբ: Այսօր մենք վստահաբար կարող ենք խոսել կայացած ու զարգացող ոլորտի մասին, որն, անշուշտ, համակարգի աշխատակիցների նվիրվածության ու համբերատար աշխատանքի արդյունքն է:

Նախորդ տարում իսկապես արվել է հնարավոր ամեն ինչ քաղաքացիների սպասարկման որակի բարելավման ուղղությամբ: Միշտ ուշադրության կենտրոնում է եղել քաղաքացու յուրաքանչյուր դիմում, և արվել է հնարավոր ամեն ինչ ժամանակին, պատշաճ ու սպառիչ պատասխանելու համար: Համոզված եմ, որ բոլորս միասին, մեր կարողությունների և հնարավորությունների սահմաններում, կշարունակենք ապահովել համակարգի կայուն առաջընթացը:

Ցանկանում եմ համակարգի բոլոր աշխատակիցներին գործնական հաջողություններ, նոր գաղափարներ, որոնք կնպաստեն կադաստրի համակարգում անհրաժեշտ և օգտակար բարեփոխումներ իրականացնել: Ձեր նվիրված աշխատանքը, հիրավի, խթան կհանդիսանա ոլորտի առջև ծառայած խնդիրներն ավելի արժանապատվորեն հաղթահարելու համար:

Վերստին շնորհավորում եմ Ձեզ, մաղթում արևշատություն և բարօրություն:

Երվանդ Զախարյան